առաջ եւս գայլերը այս ընտանիքին մեծ վնասներ են հասցրել: Հոշոտել են ընտանիքին պատկանող եւս 4 ձի: Պարույրն ասում է, որ դեպքից հետո էլ երբեւէ որեւէ մեկին չեն դիմել: Ասում է հույս չունեն, որ որեւէ աջակցություն կլինի: Հիմա էլ հույսները դնում են լրատվամիջոցների վրա: Հուսով են, որ հարցը բարձ-

դեպքում իրենք պատրաստ են խնդրին ինչ-որ չափով լուծում տալ. «Ունենք գրանցված որսորդներ, բայց դրամական օգնություն չունենք, որ գնանք մի հատ պատրոն առնենք, որ գնանք էդ գելերի դեմն առնենք»:

Տաթեւիկ ՂԱՋԱՐՅԱՆ, aravot.am

Արշալույսներդ թո՛ղ խաղաղ լինեն...

Հայոց բանակի օրը յուրովի տոն դարձավ Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցի համար:

Այդ օրը տոնացույցի ամենակարևոր և որոշիչ օրերից մեկն է, որի կազմակերպմանը մեծ պատասխանատվությամբ և արժանապատվությամբ էին մոտեցել թե՛ դպրոցի տնօրինությունը, թե՛ աշակերտները:

Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Օ.Մալյանն իր շուրջն էր համախմբել մի շարք հայրենասեր պատանիների ու աղջիկների, որոնք, հայոց եռագույնը ձեռքներին, հայրենիքի համար զոհված զինվորների հուշը սրտերում, իրենց հոգու ողջ ջերմությունն էին հղում և՛ հյուրերին, և՛ ուսուցիչներին, և՛ աշակերտներին:

Երգ, ասմունք, բեմականացում, ուրախ շուրջպար, զինվորներին ուղղված խոսք ու նամակ. ահա ինչպես էին դպրոցի սաները դիմավորում հայոց բանակի 26-րդ տարելիցը: Միջոցառմանը հրավիրված էին Լոռու մարզի երկրապահ կամավորական միության նախագահ, գնդապետ Կամո Հովհաննիսյանը, 3-րդ բանակային զորամիավորման մայոր Սամվել Եղշատյանը: Աշակերտները պատրաստել էին անակնկալ. հրավիրել էին 2016-2017 ուսումնական տարվա շրջանավարտներին, որոնք այս տարի համալրելու են հայոց բանակի շարքերը: Երեխաները պատրաստել էին բարեմաղթանքներով լի նամակներ, որոնք միջոցառման ավարտին հանձնեցին ապագա զինվորներին:

Շրջանավարտներին իր մայրական օրհնանքը հղեց դպրոցի տնօրեն Նարինե Սահակյանը:

Այս միջոցառումը ևս մեկ անգամ եկավ ապացուցելու, որ Հայաստան, հայրենիք, հայի կերպար կերտելը մեր ազգին ու ժողովրդին ի վերուստ տրված բարձրագույն պարգևն է:

Շնորհավոր տոնդ, հայո՛ց բանակ:

Լուսինե Թադևոսյան

կատարվել է պատվիրված նամակով հանձնման մասին ծանուցմամբ կամ առձեռն փոխանցմամբ: Եթե ծանուցելն անհնար է, ներառյալ՝ եթե հարևանի փաստացի բնակվելու վայրն անհայտ է, ապա հողամասի սեփականատերը կամ օրինական տիրապետողը կարող է անմիջապես ձեռնամուխ լինել սույն մասով նախատեսված գործողության կատարմանը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225.7-րդ հոդված):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նաև սահմանված է, որ եթե հարևանների փոխադարձ համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, հարևան հողամասի վրա ընկած ծառերի կամ թփերի պտուղները համարվում են այդ հողամասի պտուղներ:

Այսպիսով՝ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում, հաշվի առնելով հարևանների միջև առկա փոխհարաբերությունները և այլ հանգամանքները, կարելի է ընտրել վերը նշված լուծումներից մեկը՝ պահանջել, որ ճյուղերը հեռացվեն հողամասից, վերը նշված պահանջների պահպանմամբ կտրել ճյուղերը կամ օգտագործել հողամասում հայտնված պտուղները՝ որպես հողամասի պտուղներ:

Հարցերին պատասխանում է փաստաբան Արթուր Սուքիասյանը: Ձեզ հուզող իրավական բնույթի հարցերով կարող եք դիմել «Վանաձորյան խճանկարի» խմբագրություն (Թումանյան 6Ե): Հեռ.՝ 2-23-17: